

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Մուհամադ Հուսեյն Իսմաիլի Սանգարի

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԻՐԱՆՈՒՄ

**ԻԲ.00.03 – “Միջին մակարդակի տեսություններ, սոցիալական
կառույցներ, սոցիալական ինստիտուտներ և գործընթացներ”
մասնագիտությամբ սոցիոլոգիական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի համար ատենախոսության**

ՄԵՂՍԱԳԻՐ

Երևան - 2012

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ փիլիսոփայական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Լ. Ն. Հարությունյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ սոցիոլոգիական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Ա. Կ. Սահակյան
սոցիոլոգիական գիտությունների թեկնածու
Ժ. Ա. Անդրեասյան

Առաջատար կազմակերպություն՝ Գիլանի համալսարան, Իրանի Իսլամական
Հանրապետություն

Ատենախոսության պաշտպանությունը տեղի կունենա 2012 թ. ապրիլի 18-ին, ժ.
15.00-ին, ԵՊՀ-ում գործող ՀՀ ԲՈՂ-ի 013 մասնագիտական խորհրդի նիստում:
Մասնագիտական խորհրդի հասցեն՝ ԵՊՀ, Աբովյան 52 ա, Երևան 0025, ՀՀ:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 16.03.2012թ.:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝

Փ.գ.դ., պրոֆեսոր

Ս. Ա. Զաքարյան

Աշխատանքի ընդհանուր բնութագիրը

Թեմայի արդիականությունը

Անցած տասնամյակների ընթացքում իրանական հասարակությունում տեղի էին ունենում արդիականացման բացահայտ ու չերևացող գործընթացներ: Այսօր իրանական հասարակությունը շարունակում է ուղղել իր գործունեությունն ու ջանքերը խթանելու արդիականացման գործընթացները, որոնք ստանում են հեղափոխական ու բարեփոխական սոցիալական շարժումների աջակցությունը: Այս երկու երևույթների սոցիոլոգիական վերլուծությունը հատուկ կարևորություն է ստանում, քանզի այն կարող է նպաստել ներկայիս Իրանում սոցիալական շարժումների կերպ ստացած հավաքական վարքի սոցիոլոգիական բնորոշմանն ու արդիականացման գործընթացների արդյունավետ կառավարմանը, ինչպես նաև ժամանակակից գիտության մեջ սոցիալական շարժումների, հեղափոխականության և արդիականացման ուսումնասիրություններում Իրանի օրինակի ներբերմանը: Նման վերլուծությունը բացատրում է սոցիալական կյանքի բոլոր այն փոփոխություններն ու իրողությունները, որոնք թելադրվում ու կարգավորվում են նշված հավաքական վարքով: Սոցիոլոգիական վերլուծությունը նաև հնարավորություն է ընձեռում հետազոտելու այս սոցիալական փոփոխությունների նպատակների, պայմանների ու մեթոդների համակարգային բնույթը, ինչպես նաև զարգացման հեռանկարները:

Ատենախոսության թեմայի կարևորությունը պայմանավորված է նաև նրանով, որ սոցիալական շարժումներն Իրանում կարող են ազդեցություն ունենալ նրա հարակից երկրների Հայաստանի, Ադրբեջանի, Իրաքի, Թուրքիայի, Աֆղանստանի, Պակիստանի, ինչպես նաև Պարսից Ծոցի ու Միջին Ասիայի սահմանակից երկրներում գոյություն ունեցող շարժումների վրա:

Հիմնախնդրի գիտական մշակվածության աստիճանը

Սոցիալական շարժումների վերոնշյալ երկու տիպերի՝ բարեփոխության և հեղափոխականության, միջև կոնֆլիկտի ուսումնասիրությունը Իրանի պայմաններում նոր ու ժամանակակից երևույթ է, որի ուսումնասիրությունն Իրանում մինչ օրս համակարգային առումով չի իրականացվել: Սա նշված ոլորտի առաջին գիտական աշխատությունն է, որը համալիր վերլուծության է ենթարկում Իրանում արդի սոցիալական շարժումները՝ բացահայտելով հեղափոխության և բարեփոխման գործընթացների բնույթը, դրանց փոխկապվածությունն ու հակասականությունը, բնութագրելով արդիականացման գործընթացներն արդի Իրանում և կանխատեսումներ անելով հետագա զարգացումների մասին: Թեև տեսական մակարդակում սոցիալական շարժումների ուսումնասիրության անդրադարձել են ինչպես սոցիոլոգիայի դասականներն, այնպես էլ ատենախոսության մեջ քննարկվող ժամանակակից արևմտյան և իրանական հեղինակները, և վերջիններիս բազմաթիվ հոդվածներ են նվիրված Իրանի իսլամական հեղափոխությանը կամ բարեփոխական շարժմանը, այնուամենայնիվ դրանց մեծ մասը ուշադրություն չեն դարձրել այս երկու շարժումների միջև փոխհարաբերություններին և կոնֆլիկտին՝ իրարից անջատ վերլուծելով հեղափոխությունը կամ բարեփոխումները, անդրադարձ կատարելով Իրանում սոցիալական շարժումների միայն առանձին, միմյանցից անջատ կողմերին և հարցերին:

Այսպես, Ռաջաբ Բզադիի՝ 2005 թվականի դոկտորական ատենախոսությունը (Թեհրանի համալսարան) նվիրված էր իրանական բարեփոխական շարժմանը: Ըստ նրա՝

միջին դասի աճը կարող է ներկայացվել որպես Իրանում բարեփոխումների մեկնարկման ու զարգացման գործոն: Նա քննարկում է հարցը հինգ գլուխներում: Բացի այդ, ատենախոսությունը կառուցված է ժողովրդավարության տեսությունների հիման վրա: Ռաջաբ Իգադին շարունակաբար դիտարկում է միջին դասի աճի չորս հիմքերը՝ սոցիալական, մշակութային, քաղաքական ու տնտեսական: Ատենախոսության վերջին մասում նա անդրադառնում է բարեփոխման նախագծի ձևաչափի պատճառներին: Ըստ նրա՝ բարեփոխական շարժման ձևաչափն պետք է լինի պատճառը առաջնորդության բացակայությունն է, այսինքն՝ ժողովրդավարությանը ձգտող ուժերի միջև կազմակերպվածության պակասը, ինչպես նաև բարեփոխականների խոստումների և գործողությունների անհամապատասխանությունը:

Բացի այդ, 2001 թվականին Սեյեդ Նասրուլլահ Շեջազին Թեհրանի համալսարանում պաշտպանեց «Կառավարության սոցիալական էության փոփոխությունն Իրանում (1978-1997)» վերտառությամբ իր ատենախոսությունը, որում նա փորձում էր արտացոլել հեղափոխության առաջնորդների գաղափարական էությունն ու դերը կառավարության փոփոխություններում: 2002 թվականին Ալի Յուսեֆին «Թարբիյաթ մոդարես» համալսարանում պաշտպանեց «Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության քաղաքական լեգիտիմությունը երեք քաղաքում՝ Թեհրանում, Մաշհադում և Յազդում» վերտառությամբ սոցիոլոգիայի դոկտորի իր ատենախոսությունը: Քանի որ այդ երեք քաղաքն էլ ինքնուրույն քաղաքական, գործարար ու մշակութային կենտրոններ են և, բացի այդ, Իրանի կրոնական քաղաքներ են, դրանք չեն կարող բնորոշել իրավիճակը ողջ Իրանում:

Ամիր Նիսանիի ատենախոսությունը (Թեհրանի համալսարան, 2009 թ.) նվիրված է եղել Իրանում բարեփոխական շարժմանը: «2-րդ Խորդադ շարժման պարտության պատճառների սոցիոլոգիական ուսումնասիրություն» վերնագրված իր ատենախոսության մեջ նա բացատրում է, որ շարժման յուրաքանչյուր ժամանակաշրջանում քաղաքական առաջնորդներին ընձեռվում է արտակարգ հնարավորություն, սակայն առանց համարժեք ու անհրաժեշտ կազմակերպման և առաջնորդների կողմից պարզ ու հստակ որոշումների ընդունման և իրագործման այդ հնարավորությունն անվերադարձ կերպով կվատնվի՝ ինչպես դա եղավ Խաթամիի բարեփոխական շարժման դեպքում:

Ատենախոսության հիմնական հարցը հետևյալն է. ո՞ր ամենահիմնարար սոցիալական երևույթն է ձևավորում և ուրվագծում փոփոխություններն ու կերպափոխումները Իրանում: Հեղինակի կարծիքով, զգալի ուշադրություն պետք է դարձնել սոցիալական շարժումների կողմից աջակցություն ստացող արդիականացման գործընթացին: Այնուհետև, հիմնական հարցից հետո, ծառանում են լրացուցիչ հարցերը, ավելին՝ ատենախոսության քննարկումները և ուսումնասիրություններն ստանում են գիտական ձև: Այդ հարցերը հետևյալն են՝

1. ընդհանուր առմամբ, դասական կամ արդի տեսություններից որո՞նք են, որ կարող են վերլուծել և ուսումնասիրել իրանական հեղափոխական ու բարեփոխական շարժումները,
2. որո՞նք են այդ ուսումնասիրության նպատակներն ու մեթոդները:
3. ո՞ր կուսակցություններն ու կազմակերպություններն են ընդգրկված իրանական հեղափոխական ու բարեփոխական շարժումների մեջ,
4. որպես Իրանի հեղափոխական շարժման նկատմամբ ընդդիմադիր՝ ինչպե՞ս է ստեղծվել ու կյանքի կոչվել Իրանի բարեփոխական շարժումը,

5. Իրանի օրենսդիր ու գործադիր իշխանության մարմիններում ութ տարի պաշտոնավարելուց հետո՝ ինչպե՛ս դասավորվեց ներկայիս իշխանության կողմից բարեփոխական շարժման ներկայացման ճակատագիրը,

6. արդյո՞ք 2009 թվականի իններորդ նախագահական ընտրություններից հետո Իրանի բարեփոխական շարժումը տապալվեց և անհետացավ իրանական հասարակությունից, թե՛ այն փոխեց իր էությունը՝ վերածվելով նոր սոցիալական շարժման,

7. համեմատելով Իրանի բարեփոխական ու հեղափոխական շարժումները, ի՞նչ ընդհանրություններ ու տարբերություններ կարելի է գտնել դրանց միջև,

8. վիճակագրական տեղեկությունների համաձայն՝ որքանո՞վ է արդյունավետ արդիականացման գործընթացի դերը ժամանակակից Իրանի սոցիալական շարժումներում,

9. որքա՞ն է ժողովրդավարության աստիճանը (ժողովրդավարական դիրքորոշումները) ժամանակակից Իրանի սոցիալական շարժումներում,

10. և, վերջապես՝ եթե իրանական երկու սոցիալական շարժումներն էլ արևմտյան արդիականացումը (մոդեռնիզմը) որպես մոդել չեն ընդունում և ձգտում են խուսափել դրա նմանարկումից, ապա ինչպիսի՞ արդիականություն են նրանք փնտրում:

Ատենախոսության նպատակը և խնդիրները

Սույն ուսումնասիրության նպատակն է բացահայտել այսօրվա Իրանում սոցիալական շարժումների էությունը, բնույթը և հեռանկարները: Այդ նպատակին հասնելու համար ատենախոսության մեջ առաջադրված են հետևյալ խնդիրներն ու դրանց լուծմանն ուղղված առաջարկություններ.

1. Նկարագրել այսօրվա Իրանում հեղափոխական շարժման նպատակները, բնույթը, ձևավորման ընթացքն ու զարգացման փուլերը՝ հիմնվելով սոցիալական շարժումների վերաբերյալ սոցիոլոգիայի դասական տեսությունների վրա:

2. Իրականացնել հեղափոխական շարժման ու բարեփոխումների շրջանակներում կոլեկտիվ գործողությունների տարբեր ձևերի համեմատական վերլուծությունը:

3. Ցույց տալ պատճառահետևանքային կապերը սոցիալական էվոյուցիաների և շարժումների միջև իրանական հասարակությունում:

4. Բացահայտել սոցիալական շարժումների և բարեփոխումների փոխադարձ կապերն ու փոխգործոնությունը իրանական հասարակության պայմաններում:

5. Ուսումնասիրել հեղափոխական ու բարեփոխական շարժումների միջև անհամաձայնության ու կոնֆլիկտի ձևերը արդի իրանական հասարակությունում:

6. Բացահայտել իրան-իրաքյան պատերազմից հետո Իրանում արդիականացման գործընթացը՝ որպես բարեփոխական շարժման հիմք և առաջացման պատճառ:

7. Բացահայտել և բնութագրել իրանական հասարակությունում ձևավորված այն նոր սոցիալական շարժումները, որոնք կարող են ներազդել դրա զարգացման գործընթացի վրա, կանխատեսումներ անել այդ շարժումների ազդեցության մասին իրանական հասարակության արդիականացման հեռանկարի վրա:

Ատենախոսական հետազոտության մեթոդաբանությունը

Մեթոդաբանության տեսանկյունից՝ սույն աշխատանքը հիմնված է սոցիոլոգիայի բնագավառի դասականների, ինչպես նաև արդի սոցիալական շարժումների հետազոտողների աշխատությունների վերլուծության վրա: Այս ատենախոսությունը գրելիս հեղինակն ուսումնասիրել է սոցիալական շարժումներին վերաբերող՝ իրանական և

արևմտյան բազմաթիվ հեղինակների գիտական հրապարակումները՝ ակադեմիական աշխատություններ, որոնք այս կամ այն առումով առնչվում են սոցիալական շարժումների վերլուծությանը՝ առանձնակի ուշադրություն դարձնելով իրանական հասարակության մեջ տեղի ունեցած և շարունակվող սոցիալական շարժումների ուսումնասիրություններին: Ատենախոսությունը գրելիս հեղինակն օգտագործել է Իրանի (Թեհրանի, Իսլամաբադի, Քարբիլայի Մոդաբեսի և Գիլանի) և Երևանի համալսարաններում ու գրադարաններում առկա համապատասխան գիտական գրականությունը:

Ատենախոսության մեջ տեսական վերլուծությունն ուղեկցվում է վիճակագրական ու սոցիոլոգիական վերլուծությամբ: Իրանական հասարակությունում ժողովրդավարության ու արդիականացման մակարդակի վերաբերյալ եզրահանգումները կատարվել են վիճակագրական տվյալների վերլուծության հիման վրա: Ավելին, օգտագործվել են հեղինակի անցկացրած հատուկ հարցազրույցների արդյունքները: Ատենախոսության արդյունքները հիմնված են նաև սոցիալական շարժումների վերաբերյալ պաշտոնական փաստաթղթերի ուսումնասիրության ու վերլուծության վրա: Այդ փաստաթղթերի մի մասը պահվում է Իրանի կառավարության արխիվներում, Իրանի Իսլամական Հանրապետության խորհրդարանի հետազոտական կենտրոնում և Իսլամական Հանրապետության փաստաթղթերի կենտրոնում:

Գիտական հետազոտությունների մեծ մասը պահանջում է հետազոտական մեթոդների տարբեր տեսակների համակցում: Սույն աշխատանքը գրված է հետազոտության վերլուծության /անալիզի/ և համակցման /սինթեզի/ մեթոդներով, պատճառահետևանքային կապերի բացահայտմամբ, որոշ մասերում՝ նկարագրողական հետազոտության մեթոդի կիրառմամբ: Հեղինակը հավաքել է տվյալները՝ օգտագործելով գրադարանները, գիտական կայքէջերը, հոդվածները, հետազոտական կենտրոնների ինդեքսները, պաշտոնական փաստաթղթերը, պետական արխիվները, ինչպես նաև մամուլի և պարբերականների հրապարակումներն ու հարցազրույցները:

Ատենախոսական հետազոտության վարկածները

Սույն աշխատանքի հիմնական վարկածն այն է, որ Իրանի երկու սոցիալական շարժումների (հեղափոխական և բարեփոխական) միջև կոնֆլիկտն ու փոխգործությունը պայմանավորել են Իրանի սոցիալական արդիականացումը՝ նրան տալով առանձնահատուկ բնույթ:

Սույն ատենախոսության վարկածն ապացուցելու համար մենք վերլուծելու և գնահատելու ենք երկու շարժումների միջև եղած կոնֆլիկտները:

Հեղափոխականներն ստեղծել ու ձևավորել են համապարփակ սոցիալական ու քաղաքական խումբ և ցանցեր: Իրենց նպատակներին հասնելու համար նրանք զարգացրել են սոցիալական պաշտպանության ինստիտուտներն ու ստեղծել կրոնական և օրինակելի համայնքներ, որոնք ապահովում են իրենց արդյունավետությունն ու կայուն տեղը հասարակության մեջ:

Միննույն ժամանակ Նախագահ Ռաֆսանջանին և նրա թիմակիցները ութ տարվա ընթացքում իրականացրին արդիականացում՝ վերականգնելու համար պատերազմի պատճառած վնասները: Այդ եղանակով ապահովվեց բարեփոխական շարժման աստիճանական զարգացման հիմքը: Բարեփոխական շարժումն ուներ իր սեփական առաջնորդներն ու քաղաքական խմբերը՝ իրենց յուրատեսակ մեթոդներով և հատուկ նպատակներով: Նրանք ցանկանում էին մեկ այլ իդեալական հասարակություն կառուցել, ուստի իրենց սեփական մեթոդներով այլ քաղաքական-սոցիալական շարժումներ հիմնեցին:

Խաթամիի նախագահության երկրորդ տարուց սկսած արդեն ակնհայտ էին կոնֆլիկտն ու տարբերությունը հեղափոխության և բարեփոխման միջև: Քաղաքական կոնֆլիկտը շարունակվեց բարեփոխականների քաղաքական կառավարման ութ տարիների ընթացքում: Բարեփոխականների ձախողումը լիովին ակնհայտ էր վեցերորդ համագումարի վերջին տարում, ինչպես նաև դրանից հետո նախագահական ընտրությունների իններորդ շրջանում: Հիմնելով ակտիվ հեղափոխական ցանց՝ հեղափոխականները եկան իշխանության: Բարեփոխականների անկումը համընկավ «Օսուլգարայանի» քաղաքական ուժի՝ իշխանության գալու հետ (Ահմադի Նեջադ):

Հեղափոխական կառավարության առաջին չորս տարիների ընթացքում կոնֆլիկտն ու հակադրությունը շարունակվեցին: Մշակութային ու գլոբալ հաղորդակցության զարգացումներին համընթաց շարունակվեցին բարեփոխականների քաղաքական-սոցիալական գործողությունները: Բարեփոխականները քննադատեցին հեղափոխականների այն դիրքորոշումները, որոնք հիմնված էին նրանց պարադիգմի՝ շիա-իսլամական արդիականության վրա:

Այդ ժամանակաշրջանում բարեփոխումների առաջնորդները գիտակցեցին, որ բարեփոխական շարժումը չունի հեղափոխական շարժմանը հակադրվելու համար բավարար ներուժ և գաղափարախոսական հենք: Նրանք հասան 2009 թվականի 10-րդ շրջանի նախագահական ընտրություններին, որով սկիզբ դրվեց Իրանի նոր սոցիալական շարժման կողմից հակադրությունը դասական հեղափոխական շարժման դեմ: Եթե բարեփոխական շարժումը փոխելով իր ինքնությունն ու բնույթը, դառնա նոր սոցիալական շարժում (իրանական-կրոնական արդիականության), ապա Իրանը կարող է մուտք գործել նոր պարադիգմի տիրույթ:

Այս տեսանկյունից Իրանը գտնվում է սոցիալական փոփոխությունների գործընթացում: Եթե նոր սոցիալական շարժումը գտնի հեղափոխական շարժման հետ կոնֆլիկտի լուծման միջոցներ, ապա դա կարող է առողջ մեկնարկի հիմք դառնալ: Սակայն եթե քաղաքական բարեփոխումների շարժման ու հեղափոխական շարժման միջև կոնֆլիկտը կարծրանա, ապա մենք չենք կարող սոցիալական վերարտադրություն ու «բարեհաջող ծնունդ»՝ արդիականացման նոր փուլ ակնկալել:

Ատենախոսության գիտական նորույթը

Հեղափոխական շարժման ու բարեփոխումների համեմատական վերլուծության խնդիրն առաջարկելը ինքնին նորույթի տարր է ներմուծում սոցիոլոգիական ուսումնասիրությունների ասպարեզ: Մույն ատենախոսության մեջ առաջին անգամ քննարկվել ու հետազոտվել են հետևյալ թեմաները.

1. Իրանում արդիականության էության բացահայտում. պարզաբանվել է, որ Իրանում հեղափոխական շարժման նպատակը շիա արդիականացման նախագծի իրագործումն է, մինչդեռ բարեփոխական շարժումը որպես իր նպատակ ընդունել է իրանական-կրոնական արդիականացումը: Մույն ատենախոսությունը նպատակամիտված է բացատրելու նշված խնդրի կոնֆլիկտային բնույթը, սոցիալ-քաղաքական կողմերը, ինչպես նաև բացահայտելու ստեղծված իրավիճակի պատճառները:

2. Բարեփոխական շարժման առաջացման գլխավոր պատճառի պարզաբանում՝ ապացուցելով, որ արդիականացումն էր Իրանում բարեփոխական շարժման առաջացման հիմնական պատճառը: Արդիականացման գործընթացը, իր տարբեր ասպեկտներով, ի հայտ եկավ իրան-իրաքյան պատերազմից հետո: Ատենախոսության մեջ ապացուցում է

արդիական գործընթացի առկայությունն Իրանում, համալիր կերպով ուսումնասիրվում է արդիականացման սոցիալ-քաղաքական գործոնների ամբողջությունը:

3. Սոցիալական շարժումների բացատրում ու համեմատում՝ պարզաբանելով և համեմատելով մի կողմից իսլամական հեղափոխական շարժման կուսակցությունների և կազմակերպությունների, մյուս կողմից՝ Բարեփոխական շարժման կուսակցությունների և կազմակերպությունների, նպատակներն ու մեթոդները:

4. Արևմտյան արդիականությունը նմանարկելուց խուսափումն արտացոլելում է այն փաստը, որ հե՛նց տեղական արդիականությունն է բավարարում իրանական սոցիալական շարժումների (ինչպես հեղափոխական, այնպես էլ բարեփոխական) հետապնդած ու հասարակության մեջ պահանջված տեսակին, էությանն ու ձևին: Դրանք զերծ են մնում արևմտյան՝ ամերիկանեվրոպական, մոդեռնիզմը ամբողջովին ընօրինակելուց ու նմանարկելուց:

5. Ատենախոսության մեջ տարբերակվում են Իրանում սոցիալական ու քաղաքական շարժումները՝ ցույց տալով, որ Իրանի քաղաքական դաշտի բարեփոխումները տապալվեցին, մինչդեռ սոցիալական բարեփոխումները դեռ ընթացքում են: Ուստի դա առաջ է քաշում հետևյալ հարցը. «Փոխե՞լ է, արդո՞ք, բարեփոխական շարժումն իր էությունը, թե՞ ոչ»: Ատենախոսության մեջ փորձ է արվում պատասխանել այդ հարցին: Նաև պարզաբանվում է այն հանգամանքը, որ թեև քաղաքական շարժումը կամ բարեփոխական շարժման քաղաքական թևը ավարտին հասցրին իրենց տապալման գործընթացը, սակայն միևնույն ժամանակ այն փոխեց իր էությունը՝ վերածվելով նոր սոցիալական շարժման և այժմ դերակատարում ունի իրանական խնդիրների լուծման թատերաբեմում:

6. Հիմնավորվում է Իրանում արդիականացման նոր պարադիգմին ուղղված հայացքը, որը բացատրում ու պարզաբանում է այն գիտական փաստը, որ այդ երկրում սոցիալական-քաղաքական խնդիրները՝ այժմ և ապագայում, ձևավորվելու են նոր պարադիգմի ու մթնոլորտի ներքո, ինչը ենթադրում է մի կողմից՝ երկու հեղափոխական շարժումների միջև կոնֆլիկտի կարգավորում և, մյուս կողմից՝ նոր սոցիալական շարժում՝ բարեփոխական շարժման պարզ անվանումով և շահադրդամբ:

Ատենախոսության տեսական և կիրառական արժեքը

Ատենախոսության գիտական արժեքն այն է, որ այն.

1. Առաջին անգամ համալիր վերլուծության է ենթարկում սոցիալական շարժումների՝ հեղափոխության և բարեփոխումների, միջև փոխազդեցությունն ու հակասականությունը, որոնց փոխազդեցության դինամիկան բնութագրում են արդիականացման փուլերը Իրանում,

2. Ատենախոսական հետազոտությունը ընդլայնում և հարստացնում է առկա սոցիոլոգիական տեսությունը սոցիալական շարժումների վերաբերյալ նոր սոցիալական փաստերի մասին գիտելիքով, գիտական եզրակացություններով և կանխատեսումներով արդի իրանյան հասարակությունում սոցիալական շարժումների փոխակերպման և զարգացման, իրենց կառուցվածքային առանձնահատկությունների, մեխանիզմների, նպատակների և խնդիրների մասին,

3. Հետազոտության մեջ ներառված են ներկայիս Իրանում հեղափոխական շարժումների և բարեփոխումների վերաբերյալ բազմաթիվ էմպիրիկ փաստեր, օրինակներ, որոնք համակարգային կերպով վերլուծում են արդի սոցիալական իրականությունն ու լրացնում են տեսությունը:

Տեսակիրառական նշանակություն կարող է ունենալ աշխատանքում Իրանի հասարակության արդիականացման միտումների բացահայտումն ու զարգացման կանխատեսումը, որը կարող է կիրառվել ինչպես հետագա սոցիոլոգիական և միջառարկայական գիտական հետազոտությունների համակարգում, այնպես էլ սոցիալական շարժումների և արդիականացման գործընթացների կառավարման գործում:

Ատենախոսության մեջ մշակված գիտական խնդիրները կարող են ներառվել սոցիոլոգիայի դասավանդման առարկայական ծրագրերում:

Ատենախոսության փորձաքննությունը

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանի սոցիոլոգիայի ֆակուլտետում: Ատենախոսությունը քննարկվել է ԵՊՀ Սոցիոլոգիայի ֆակուլտետի կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի՝ 2011 թվականի հունիսի 2-ի թիվ 8 նիստում:

Ատենախոսության հիմնական դրույթները հեղինակի կողմից ներկայացվել են գիտաժողովներում և գիտական սեմինարներում, մասնավորապես՝ 2010 թվականի մայիսի 9-ին Իրանի Գիլանի համալսարանում կայացած՝ Իրանին նվիրված 10-րդ գիտահետազոտական կոնֆերանսում՝ «Դասական ու արդի տեսությունները սոցիալական-քաղաքական շարժումներում» թեմայով, ինչպես նաև իր կողմից հրատարակած 2 մենագրություններում և 6 գիտական հոդվածներում:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից՝ իրենց ենթագլուխներով, վերջաբանից և գրականության ցանկից:

Ատենախոսության համառոտ բովանդակությունը

Ատենախոսության առաջին գլխում՝ **“Սոցիալական շարժման նախապայմանները, նպատակները և բնույթն ըստ սոցիոլոգիական տեսությունների”** վերնագրով, ներկայացված է ատենախոսական հետազոտության հիմնական օբյեկտին՝ սոցիալական շարժումներին նվիրված դասական և ժամանակակից սոցիոլոգիական տեսությունների համառոտ վերլուծությունն ու համադրումը, որի նպատակն է ատենախոսական հետազոտության տեսական հիմքերի ապահովումն ու տեսական հիմնավորումը:

Առաջին գլխի առաջին ենթագլխում ներկայացված են **“Դասական սոցիոլոգիական տեսությունները սոցիալական շարժումների մասին”**: Այստեղ քննարկվում են սոցիալական շարժումներին վերաբերող՝ Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի, Մ. Վեբերի, Վ. Պարետի, Ռ. Արոնի տեսությունները սոցիալական շարժումների պատճառների, ընթացքի, ձևերի մասին:

Տարբերակելով դասական սոցիոլոգիական տեսություններից սոցիալական շարժումների մասին ժամանակակից սոցիոլոգիական տեսությունները՝ առաջին գլխի երկրորդ ենթագլխում **“Սոցիալական շարժման արդի սոցիոլոգիական տեսությունները”** վերնագրով ներկայացված են այնպիսի սոցիոլոգների հայացքներ սոցիալական շարժումների վերաբերյալ, ինչպիսիք են Ռ. Բնգլիարթը, Յու. Հաբերմասը, Է. Գիդենսը, Մ. Կաստելը, Ա. Թուրենը, Բ. Քալիունը:

Առաջին գլխի երրորդ ենթագլխում՝ **“Նոր սոցիալական շարժումների առանձնացման սոցիալական հիմքերը”**, ներկայացված են ժամանակակից սոցիալական շարժումների տիպաբանման սկզբունքները սոցիոլոգիայում, սոցիալական շարժումների տեսակները, դրանց առանձնահատկությունները:

Ատենախոսության **Երկրորդ գլուխը՝ «Իրանում սոցիալական շարժումների համեմատական վերլուծություն»** վերնագրով, նվիրված է Իրանում հեղափոխական և բարեփոխական սոցիալական շարժումների համեմատական վերլուծությանը: Առաջին ենթագլխում՝ **«Իրանի հեղափոխական շարժումը, Հիմնական կուսակցություններն ու կազմակերպությունները, դրանց նպատակները և մեթոդները»** ներկայացված են Իրանում 1978 թ-ին տեղի ունեցած հեղափոխության սոցիալական հենքը, հեղափոխությանը աջակցած քաղաքական և հասարակական ուժերի առանձնահատկությունները, գաղափարախոսական հիմքերը, գործելու մեթոդները, նպատակները, ինչպես նաև հետևանքները:

1978 թվականին տեղի ունեցած փոփոխությունների համախումբը դարձավ ընդդիմադիր շարժման ուժգնացման ու Շահի կառավարության կազմալուծման պատճառը: Տնտեսական ճգնաժամը, գնաճը, քաղաքական բարեփոխումներ անցկացնելու և մարդու իրավունքների, մամուլի, արտահայտվելու և հավաքների ազատության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու (որն ուժգնացավ ժողովրդավարական կառավարության՝ իշխանության գալուց հետո) նպատակով Շահի վրա արտաքին ճնշումը բարդ պայմաններ ստեղծեց Շահի համար՝ ստիպելով նրան որոշ քաղաքական ազատություններ և բարեփոխումներ կիրառել: Սակայն այդ գործողությունների ուշացումը դրդեց ընդդիմությանը լինելու ավելի ակտիվ և ուժեղացրեց վարչակազմի ժողովրդական թևը, որը հոծ սոցիալական խմբերի հոգևոր առաջնորդն էր: Ընդդիմությանը ճնշելու կամ ժողովրդավարական շարժեր կատարելու վարչակազմի փորձերը տապալվեցին, երբ Շահփուր Բախթիարը Շահի վերջին վարչապետը, իշխանության եկավ և, ի վերջո, 1978թ. Իրանի իսլամական հեղափոխությունը հաղթեց՝ տապալելով թագավորական վարչակարգն Իրանում:

Իրանի իսլամական հեղափոխության (որն ընդվզում էր՝ ընդդեմ Փահլավիների ավտորիտար վարչակազմի) հաղթանակը նոր մթնոլորտ ստեղծեց Իրանում բաղձալի ժողովրդավարության նոր ալիքի համար: Այդպիսի ալիքի ձևավորման ընթացքում, ի լրումն ներքին գործոնների, զգալի ազդեցություն ունեցավ ավտորիտարիզմը մերժելու համաշխարհային մթնոլորտը և կայսերապաշտության դեմ արշավը: Իսլամական հեղափոխության ձևով ժողովրդավարություն հաստատելու նպատակով հեղափոխական շարժման երրորդ ալիքի ձևավորման վրա ներագրում էին ներքին ու արտաքին գործոնները: Ներքին գործոններն էին՝ իշխանության քաղաքական լեգիտիմության բացակայությունը, տնտեսական հիմնախնդիրները, հանրային դժգոհությունն ու քաղաքական մոբիլիզացումը, անհավասարաչափ քաղաքական ու տնտեսական զարգացումը, ժողովրդի կրոնական զգացմունքները, ինչպես նաև Իմամ Խոմեյնիի առաջնորդությունը և գաղափարախոսական իսլամը: Արտաքին գործոններն էին՝ ձեռնարկվող միջազգային քայլերի ու որոշումների ճնշումը Շահի վրա՝ ստիպելու ընդունել որոշ ժողովրդավարական սկզբունքներ: Արտաքին գործոններից էր «Միջազգային համաներում» /«Amnesty International»/, Մարդու իրավունքների միջազգային հանձնաժողովի տիպի կազմակերպությունների դերը Իրանում մարդու իրավունքների խախտումների առնչությամբ: Երկրից դուրս գտնվող որոշ իրանական խմբեր, արտերկրի մամուլը և կուսակցություններն ու քաղաքական կազմակերպություններն արտաքին ճնշում էին գործադրում:

Նախ, Մոհամմադ Ռեզա Շահ Փահլավիի վրա առավել լուրջ ճնշումն էին գործադրում խորհրդարանի որոշ անդամներ, իսկ այնուհետև նաև ԱՄՆ դեմոկրատական իշխանությունը, ինչն ուղի հարթեց Իրանում Իսլամական հեղափոխության և ժողովրդավարության երրորդ ալիքի զարգացման համար: Երկրորդ, Գվադելուպայի կոնֆերանսի ընթացքում եվրոպական առաջնորդների ընդունած որոշումը կարելի է

արտաքին գործոն համարել: Ուստի, ի լրումն ներքին գործոնների, հեղափոխության վրա ներազդել են նաև որոշ արտաքին գործոններ:

Վերը նշվածը Բալամական հեղափոխության ծագման ու ծնունդի գործընթացն էր, սակայն հեղափոխական շարժումն իր երկրորդ փուլում, այսինքն քաղաքացիական հիմունքներ ստեղծելիս, հանդիպեց որոշ խոչընդոտների, որոնցից ամենաէականը Իրաքի պատերազմն էր Իրանի դեմ: Դա նշանակում է, որ մինչև Իրանում կրոնական ժողովրդավարական իշխանության համար պահանջվող կառույցն ու հիմունքները ձևավորելը, անհրաժեշտ էր հաղթահարել շարժման արժեքների և նպատակների որոշման հետ կապված արգելքներն ու հիմնախնդիրները:

Համակարգային արգելքների **առաջին խումբը** ներառում է՝ 1) ժողովրդավարություն հաստատելու քաղաքական մշակույթի բացակայությունը, 2) քաղաքական մշակույթի հակվածությունը ավտորիտարիզմի ու չմասնակցության, 3) դավադիր նկրտումները, 4) անկանոն ռազմաքաղաքականությունը, 5) կախվածությունն իրանցիների կամքից և ակտիվությունից: **Երկրորդ խումբն է**՝ 1) Իրանի դեմ Իրաքի 8 տարվա սանձազերծած պատերազմը, 2) անկախություն հռչակող խմբերի և ընտանիքների ընդդիմանալը, 3) կոնֆլիկտը ԱՄՆ-ի և Իսրայելի հետ:

Ամրապնդվելու ընթացքում՝ Բալամական հեղափոխության քաղաքական իշխանությունը հաստատելիս, **հեղափոխական շարժումն օժտված էր հետևյալ հատկություններով՝**

- պաշտոնների մեծամասնությունը որոշվում էին ուղղակիորեն կամ ժողովրդի մասնակցությամբ,

- ժողովրդավարական սահմանադրությունը, խորհրդարանի անդամներին ու նախագահին ընտրեց ժողովուրդը,

- ժողովրդի կամքն արտահայտելու և դրա վրա հիմնադրված որոշումներ ընդունելու նպատակով հանրաքվե անցկացնելու և քաղաքային ու գյուղական խորհրդներ հիմնելու ուղղությամբ քայլեր են ձեռնարկվել,

- 1991-1999թ.-ը կարևոր առանձնահատկություններից է Բալամական հեղափոխության խարիզմատիկ իշխանության կողմից Շիա գաղափարախոսության ընդունումը (կրոնական հեղինակավոր առաջնորդով՝ իշխանության բուրգի վերևում):

1978-1997թթ. հեղափոխական շարժման ակտիվ հասարակական-քաղաքական կազմակերպություններն ու խմբերն էին՝ Իրանի «Ձոմհորի Էլամի» կուսակցությունը, «Հոգեհ Էլմիեհ Դոմ Մոդարես» միությունը, «Ռոհանիաթ մոբարեզ» միությունը, «Մոթալեֆեհ իսլամի» կուսակցությունը, «Մոհանդեհին իսլամի» միությունը, «Ֆարհանգիան» իսլամական ընկերակցությունը, «Ջեյնաբ» միությունը, MDs Իրանի ընկերակցությունը, «Քարեգարան» իսլամական ընկերակցությունը, «Բազգար» իսլամական ընկերակցությունների միությունը, Իրանի համալսարանների իսլամական միությունը, Ուսանողների իսլամական ընկերակցությունը, Թեհրանի «Վոազան» ընկերակցությունը, Հնդկական ենթամայրցամաքի շրջանավարտների իսլամական հիմնադրամը, «Քարմանդան» իսլամական ընկերակցությունը, «Վարզեշքարան» իսլամական ընկերակցությունը:

1997-2011թթ. հեղափոխական շարժման ակտիվ հասարակական-քաղաքական կազմակերպություններն ու խմբերն էին՝ «Հոգե Էլմիեհ Դոմ Մոդարես» միությունը, Իմամի և առաջնորդի ուղու աջակիցների դաշինքը, «Ռոհանիաթ մոբարեզ» միությունը, «Համտո» իսլամական հիմնադրամը, Իրանի իսլամական «Աբադգարան օսուլգարայան» կուսակցությունը /վերջինիս ներկայացուցիչն ու այդ կուսակցության աջակցությամբ պետության նախագահ դարձած Ահմադի Նեժադն է/: Ատենախոսության այս ենթազվիտում

վերլուծության են ենթարկվել վերոնշյալ հեղափոխական սոցիալ-քաղաքական ուժերի գաղափարախոսական հիմքերը, գործունեության բնագավառները, ակտիվության մեթոդները, արդիականացման վերաբերյալ կողմնորոշումներն ու իրական նպատակները:

Երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ **“Իրանի քարեփոխական շարժումը. Հիմնական նպատակները, մեթոդները, կուսակցություններն ու կազմակերպությունները (1997-2009թթ.)”**, ուսումնասիրվել է Իրանում հեղափոխական շարժմանը հակադրվող քարեփոխական շարժումը, որի կողմնակիցները մեծ դժվարությամբ են կարողանում որոշ բնագավառներում հակակշռել հեղափոխականների կողմից պետության և հասարակության կառավարումն ու ներքերել քարեփոխումների պահանջն ու առաջարկությունները:

Կարելի է առանձնացնել Իրանում սոցիալական շարժումների հետևյալ նպատակները.

1. Ազգային նպատակներ. սրանք համապարփակ նպատակներ են: Որոշ դեպքերում դրանք գտնվում են կոնֆլիկտային պայմաններում: Մասնակցության շարժառիթները տարբեր են և ունեն ազգային ընդգրկում: Կոնֆլիկտային պայմաններում ազգային նպատակներն են՝ օրենքի իշխանությունը, կրոնական ժողովրդավարությունը և ժողովրդավարության նոր մեկնաբանումը:

2. Տարածքային/տեղային նպատակներ. սրանք սահմանափակ են և չեն ներթափանցում հասարակական գիտակցության մեջ: Բարեփոխումների աջակիցներն այնքան էլ տարված չեն այդ նպատակներով: Օրինակ՝ մենք կարող ենք հանդիպել քարեփոխական նպատակները համալսարաններում, գործարաններում, դպրոցներում, տեղական խորհուրդներում. դրանցից յուրաքանչյուրը փոքր աշխարհագրական տարածքում ընդգրկում է անձանց որոշակի քանակ, ինչը չի հանգեցնում զգալի կոնֆլիկտի: Բարեփոխումների տարածքային/տեղային ու սահմանափակ նպատակակետերն են՝ քաղաքային և գյուղական խորհուրդները, ընկերակցությունները՝ միավորումները, համալսարանները, ուսանողները, Սոցիալական կազմակերպությունները:

3. Առարկայական ուղղվածության նպատակներ. այս նպատակները տեսականորեն կարող են բարձր մակարդակում որոշակիություն և կոնֆլիկտ առաջացնել, իսկ ենթակառուցվածքի տեսանկյունից դրանք արտահայտում են կուսակցությունների՝ գաղափարական, սոցիալական ու քաղաքական հարցերում հայացքների որոշակի համախմբություն: Օրինակ՝ արդյո՞ք ղեկավարող քաղաքական ուժը լեգիտիմ է, թե՞ ոչ, ո՞րն է նրա տիրույթը, ո՞րն է մարդու տեղն ու սահմանումը և մարդու համար հոգևորի հայեցակարգը: Առարկայորեն ուղղված նպատակներն են՝ իշխանության, հատկապես՝ քաղաքական, սահմանափակումն ու լեգիտիմությունը, քաղաքական մասնակցության ակտիվացումը, մարդկանց հոգևոր-բարոյական արժեքների կարևորումը:

4. Բարեփոխական ընտրանու կոնկրետ նպատակները. սրանք այն նպատակներն են, որոնց քարեփոխումների առաջնորդներն ու ընտրանին առաջնահերթություն են տալիս: Դրանք ոչ այնքան ընդարձակ, որքան խորն են, և, որոշ դեպքերում՝ բավականին բարդ: Եթե կոնֆլիկտն ուժգին է, այն կարող է հանգեցնել քարեփոխական շարժման հետնահանջին կամ վերափոխել այն հեղափոխության, կամ էլ քարեփոխական շարժումը ձայնորդվում է: Բարեփոխական ընտրանու հիմնական նպատակները ներառում են՝ օրինականություն, տեքստերի, հատկապես՝ կրոնական (Իսլամական, շիա), ազատ ընթերցում, Իրանի Իսլամական Հանրապետության Սահմանադրության ազատ նոր մեկնաբանություն, քաղաքացիական հասարակություն, ազատություն:

5. Բարեփոխականների համապարփակ սոցիալական նպատակները: Այս նպատակների մասնաբաժինը բավականին մեծ է, և ուժգին առաջխաղացման դեպքում կարող են ի հայտ գալ այնպիսի վտանգներ, ինչպիսիք են հեղափոխությունը և բարեփոխումների ճնշումը, հատկապես երբ բարեփոխումների ընտրանին ու առաջնորդները դերակատարում ունեն դրա կերտման գործում, կամ էլ երբ նրանք մի կողմ են քաշված՝ հիասթափությամբ պատված: Բարեփոխականների զանգվածային թիրախներն են՝ տնտեսական կոռուպցիան ու ֆինանսական հիմնախնդիրները, ազատ մրցակցությունը, հանդուրժողականությունը, աջակցումն ու արդիականացումը, երկրում առկա մասնակցության և արդյունավետության համակարգային ճգնաժամերի լուծումը:

Պետք է նշել, որ սոցիալական շարժումների ոչ մի մեթոդ բացարձակ լավը չէ: Ուստի, բարեփոխական շարժումների թիրախներին և դրական նպատակներին հասնելու մեթոդները չեն կարող ընտրվել՝ զերծ մնալով դրանց բացասական հետևանքներից ու արդյունքներից, սակայն բարեփոխական շարժումներից ընտրված մեթոդները կարող են լինել դրական, արգասաբեր և բավարար նախընտրական տարիներին: Ժամանակի ընթացքում այդ մեթոդները կարող են փոփոխել կառուցվածքը՝ աստիճանաբար դրսևորելով իրենց բացասական հետևանքները:

Ստորև ներկայացված են Իրանի բարեփոխական շարժման ութ տարիների ընթացքում (1997-2005թթ.)՝ բարեփոխական ընտրանու կիրառած մեթոդները, որոնք նրանց գերիշխանության պայմաններն էին: Սկզբից ներկայացնենք 1997 թ. բարեփոխական շարժման մեթոդները. 1) քաղաքացիների միջև երկխոսությունը, 2) աջակցությունն ու հանդուրժողականությունը, 3) լեզվափոխությունը, 4) կազմակերպված քաղաքացիական ակտիվություններ, 5) աստիճանական ու խաղաղ մոտեցումը, 6) արկածախնդիր մեթոդների չկիրառումը, 7) մեծամասնությունը, 8) բազմակարծությունը:

Իրանի բարեփոխական շարժման 1997թ.-ին հաջորդող տարիների ընթացքում բարեփոխական զանգվածների կիրառած մեթոդներն են. 1) աջակցությունն ու հանդուրժողականությունը, 2) օրինականությունը, 3) զանգվածային կառավարում և ժողովրդավարություն, 4) աստիճանական ու խաղաղ մոտեցում, 5) քաղաքային բնակչության և գյուղացիների զանգվածային մասնակցություն:

Ատենախոսության այս ենթագլխում ներկայացված են նաև Իրանում բարեփոխական շարժումը ներկայացվող հասարակական-քաղաքական ուժերի համառոտ նկարագրությունն ու դրանց գործունեության նպատակները, խնդիրները, մեթոդները և հեռանկարները: Բարեփոխական շարժման ներկայացուցիչներն են «Ռոհանիոն-է մոբարեզ» խորհուրդը, «Իսլամական հեղափոխության մոջահեդին» կազմակերպությունը, «Իսլամական Իրանի մոշարեքաթ» կուսակցությունը, «Իսլամական Իրանի համբաստեզի» կուսակցությունը, Թահքիմ-է վահդաթ գրասենյակը, Համալսարանի դասախոսների իսլամական ընկերակցությունը, Մոհանդեսան իսլամական ընկերակցությունը, Մոպեման իսլամական ընկերակցությունը, Բժիշկների իսլամական միությունը:

Ատենախոսության երկրորդ գլխի երրորդ ենթագլխում՝ **«Հեղափոխական շարժումը (1978) և բարեփոխական շարժումը (1997) Իրանում. համեմատական վերլուծություն»** հիմնավորվում է, որ չնայած Իրանի երկու ժամանակակից բարեփոխական ու հեղափոխական շարժումների միջև նմանությանը՝ բազմաթիվ հարցերի շուրջ դրանք գտնվում էին հակասությունների մեջ: Կոնֆլիկտը հիմնականում պտտվում էր կարիքների և պահանջների, առաջնորդության տեսակի, այդ շարժումների ակտիվիստների ու ընտրանու ազդեցության աստիճանի, սահմանված նպատակների, իշխանության ու հեղինակության սահմանների, միտումների և նախապատվությունների, քաղաքական

ու միջազգային կարևորագույն հարցերի վերաբերյալ տեսակետների և, վերջապես, նրանց վրա կրոնի ու գաղափարախոսության ազդվածության և դրանց մեկնությունների շուրջ: Խաթամիի առաջնորդած՝ իրանական բարեփոխական շարժմանը առավելապես մասնակցում էին մտավորականները, կրթված ու փորձառու շերտերը, ինչպես նաև որոշ միջին շերտեր: Ըստ էության, ուսանողական շարժումը համարվում է Իրանի բարեփոխումների հիմնասյունը, մինչդեռ երկրի հեղափոխական շարժման մասնակիցների մեծամասնությունը հասարակության հիմնական զանգվածից է՝ ներառյալ միջին ու միջինից ցածր մարդկանց Սոցիալական տարբեր շերտերից:

Ավելին, սոցիալական շարժումների մեխանիզմներն ու մեթոդներն այլ տարբերություններ են բացահայտելու: Իրանի բարեփոխական շարժման ընթացքում կիրառվել են հաշտեցնող, խաղաղ ու հանդարտեցնող մեթոդներ, իսկ ընդհանրացումը և զանգվածային ուղղվածությունն այնքան էլ կարևոր չէին: Ի հակառակ դրան հեղափոխական շարժումը սովորաբար կապվում է մոբիլիզացման ու քառսի հետ: Դասական Սոցիալական շարժումներում վերջնական նպատակը էական նշանակություն ունի՝ նույնիսկ ավելի նշանակալից, քան մեթոդները և ուղիները: Այդ գերնպատակն է՝ տապալել գոյություն ունեցող քաղաքական վարչակարգը՝ այն փոխարինելով ավելի նպատակորոշ, ինչպես, օրինակ, Իրանի հեղափոխական շարժման պարագայում՝ Իսլամական հանրապետության ստեղծումն ու կրոնական կառավարության հիմնումը վարչակարգի հիմնասյուններից է: Մինչդեռ արդի սոցիալական շարժումներում մեթոդներն ավելի կարևոր են, քան նպատակները, ինչը վկայում է սոցիալական կառուցի դեմ յուրատեսակ բողոքի մասին: Նրանք ձգտում են կերպափոխել սոցիալական հարաբերությունները, այլ ոչ թե պարզապես փոխել կառավարությունը կամ քաղաքական կառույցները: Ըստ էության, դասական սոցիալական շարժումը միտված է փոխելու քաղաքական կառուցվածքը, մինչդեռ արդի սոցիալական շարժումը նպատակամղված է փոխելու սոցիալական կառուցվածքը, և ուղղված չէ միայն պետությանը:

Իրանի հեղափոխական շարժման դերակատարների ուշադրության կենտրոնում քաղաքական հարաբերություններն են, մինչդեռ բարեփոխականների համար քաղաքականությունն ու պետությունը երկրորդական են, և էթե նույնիսկ որոշ բարեփոխականներ սխալմամբ սևեռվում են քաղաքականության ու իշխանության վրա, նրանք արագորեն գիտակցում են, որ բարեփոխական մնալու համար անհրաժեշտ է իրենց հայացքը փոխադրել դեպի հասարակությունը և համայնքը:

Թեև հեղափոխականների կարծիքով, նպատակների իրագործումը կարդարացնի ցանկացած միջոցի կիրառումը, սակայն Իրանի սոցիալական շարժման մասնակիցները և ընտրանին 1979թ. հեղափոխությունից հետո սկսեցին հասկանալ, որ միայն քաղաքական կառուցվածքի կերպափոխումը չի կարող արդարացնել սոցիալական հիմնախնդիրների լուծման համար ցանկացած միջոցների ընտրությունը: Հե՛նց դա է պատճառը, որ կրոնական ժողովրդավարության մեկնությունը բարեփոխականների և հեղափոխականների շրջանում դարձավ հասարակական երկխոսության կարևորագույն թռուցիք արտահայտությունը:

Դասական սոցիալական շարժման մեջ գոյություն ունի երկու կարևոր հոսանք, որոնք արդի սոցիալական շարժումներից շատ ավելի ակնառու են, դրանք կարելի է տեսնել ժամանակակից Իրանում. նախ՝ բարձրագույն առաջնորդն ու նրա դերակատարումը և երկրորդ՝ ակտիվ ընտրանու և մտավորականների դերակատարումը: Առաջնորդի և ակտիվ ընտրանու դերակատարումը շատ ավելի արդյունավետ է դասական, քան արդի շարժումներում: Հավանաբար, արդի շարժման առաջնորդությունը չունի անհատական-

ացված կառուցվածք, և ներկայացված է լայն տեսադաշտով կամ «լողացող» դիրք ունեցող խորհրդակցական մարմնով՝ ինչպես Իրանի բարեփոխական շարժման դեպքում, որը առաջնորդ չունեցող շարժում էր՝ «անգլուխ», ինչպես ասում էին բարեփոխականները: Ի տարբերություն դրան, Իրանի հեղափոխական շարժման առաջնորդի դերն ու դիրքը կարևորագույն հարացույցերից մեկն է, և բարձրագույն առաջնորդն ունի վերջին խոսքն ասելու իրավունքն ամեն հարցի շուրջ: Ավելին, դասական ու արդի շարժումներում նշանակալից գործոն է մտավորականների և ակտիվ ընտրանու դերը: Մտավորականն արդի սոցիալական շարժման բաղկացուցիչ տարրն է, կամ էլ ենթադրվում է, որ այդպիսին է, մինչդեռ դասական սոցիալական շարժման մեջ նա ունի խմբային կողմնորոշում և դրան համապատասխան որոշում է ռազմավարությունը, մշակում մարտավարությունն ու դրսևորում վարագիծը: Մենք կարող ենք տեսնել նման ակտիվ ընտրանիներ ու մտավորականներ հեղափոխականների շարքերում, մինչդեռ բարեփոխականները, թեև ունեն նման ընտրանու և մտավորականների կարիքը, այնուամենայնիվ անտեսում են դա՝ տուժելով խառնաշփոթից ու տրոհվածությունից:

Այսօր Իրանում բարեփոխական գործընթացը կարող է դիտվել երեք ոլորտում՝ կրոնական, տնտեսական ու քաղաքական: Ըստ երևույթի, բարեփոխական շարժումն իրագործվեց քաղաքական բարեփոխումների զգալի շեշտադրմամբ՝ առանց կրոնական բարեփոխումների բավարար աջակցության, և այդ իսկ պատճառով այն չունեցավ սպասված հաջողությունը: Իրանում կրոնական բարեփոխումը մնաց գուտ տեսական բանավեճերի տիրույթում: Հիմնականում՝ Իրանում կրոնական բարեփոխումների սոցիալիզացման համար ոչ մի նախագիծ չմշակվեց ու չառաջացավ: Թեև Իրանում կրոնական բարեփոխումների ջատագովները կառուցողական երկխոսություն չեն վարում գործող ավանդապատման հետ, սակայն նրանք ինքներն էլ կրոնական բարեփոխմանը լուրջ չեն վերաբերում:

Հարկ է նշել, որ կրոնական ժողովրդավարության հաստատումը անհնար է մի հասարակությունում, որի տնտեսական կառույցները համահունչ չեն ժողովրդավարության հետ: Հնարավոր չէ ժամանակակից ժողովրդավարական արժեքների վրա հիմնված հասարակություն կառուցել՝ տնտեսության մեջ ունենալով գերիշխող ավատատիրական հարաբերություններ: Դա նաև երևում է քաղաքական մշակույթի ասպարեզում: Երբ ռազմատենչությունը գերիշխող մշակույթ է՝ անմրցունակ ու ոչ ժողովրդավարական, իսկ իշխանության ձգտող դերակատարները կարևոր դեր են խաղում դրանում, ապա երկրում ժողովրդավարության հաստատումը և շարունակականությունը վտանգված են: Բացի այդ, քանի դեռ իրանական լայն հասարակության շրջանում քաղաքացիական հասարակությունը թույլ է՝ հնարավոր չէ ակնկալել հարատև ժողովրդավարության վրա հիմնված ամուր հարաբերություններ:

Բարեփոխական շարժումը համարժեք արձագանք էր, բայց այն բավականաչափ ունակ չգտնվեց՝ բարձրանալու սոցիալական գործողության մակարդակ: Վստահաբար բարեփոխումների առաջնորդները նշանակալից հաջողություններ ու ձեռքբերումներ ունեցան, որոնցից կարևորագույնը Խաթամիի առաջ քաշած «Քաղաքակրթությունների միջև երկխոսության» տեսությունն է, որն ընդունվեց միջազգային կազմակերպությունների կողմից: Բայցևայնպես, առաջնորդների ամենաեական խնդիրը հետևյալն էր. նրանք կորցրել էին հանրության հետ լայն կապերը և չէին կարողացել պահպանել դրանք մասնակցության փուլում՝ պատշաճ ուշադրություն չդարձնելով դրանց: Դա հատկապես երևաց առաջին երկու տարիներից հետո, երբ առաջնորդներն ու ընտրանին լքեցին բարեփոխումներ ակնկալող հասարակությանը: Նրանք ներկա չէին այնպիսի ցնցումների ժամանակ, ինչպիսիք էին գրոհները Թեհրանի համալսարանի հանրակացարանների վրա

և Թավրիզում տեղի ունեցած քաղաքացիական բախումների ժամանակ: Առաջնորդների թույլ արձագանքները այդ ողբերգական իրադարձություններին չպետք է անտեսվեն:

